

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17/2

19 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Բետարտշին» ՍՊԸ բողոքը ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետի 21.07.2014 թ-ի թիվ 2/Դ որոշման դեմ:

«Բետարտշին» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

Արմավիրի տարածքային հարկային տեսչության դիմումը մերժվել է հետևյալ հիմնավորումներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի համաձայն վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են օրենքի 63-րդ հոդվածով սահմանված հիմքերը: Մասնավորապես, նշված հոդվածով սահմանված են ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր ճանաչելու հիմքերը: Այս դեպքում 23.05.2007թ-ի թիվ 1023772 ստուգման ակտն իրենից ներկայացնում է իրավաչափ միջամտող վարչական ակտ: Ակտը «Բետարտշին» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվել է ՀՀ ԿԱ ՀՊԾ գանգատարկման հանձնաժողովին: Քննարկումների արդյունքում ՀՀ ԿԱ ՀՊԾ գանգատարկման հանձնաժողովի 13.07.2007թ-ի թիվ 169/2 որոշմամբ «Բետարտշին» ՍՊԸ-ի բողոքը մերժվել է՝ 23.05.2007թ-ի թիվ 1023772 ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Ակտի իրավաչափությունը հաստատվել է նաև ՀՀ վարչական դատարանի 12.03.2009 թ-ի թիվ ՎԴ/3741/05/08 վճռով: Ուստի 23.05.2007թ-ի թիվ 1023772 ստուգման ակտն անբողոքարկելի իրավաչափ վարչական ակտ է, որը հաստատվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 03.06.2009թ-ի որոշման հիման վրա ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատարանի 12.03.2009թ-ի թիվ ՎԴ/3741/05/08 վճռով: Վերոշարադրյալից ելնելով անհրաժեշտ է փաստել, որ վարչական գործում բացակայում են հիշյալ ակտն առոչինչ կամ անվավեր լինելու հիմքերը, ինչը կարող էր հիմք հանդիսանալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի համաձայն վարչական ակտի փոփոխման կամ բեկանման համար (որը վարչական գործի լսումների ժամանակ ընդունեց և հաստատեց նաև դիմումատու «Բետարտշին» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Սարիբեկյանը): Հետևաբար, 23.05.2007թ-ի թիվ 1023772 ստուգման ակտն ընդունվել է ՀՀ Ասահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում, իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել այդ ակտի իրավաչափությունը:

Արմավիրի հարկային տեսչության կողմից դիմումի մերժման հիմնավորումները չեն վերաբերվում դիմումում բերված փաստին, այն է՝ Արմավիրի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՐՁ-1-0296/02/09 գործով վճիռը չի վերաբերվում թիվ 1023772 ստուգման ակտի իրավաչափությանը: «Բետարտշին» ՍՊԸ-ի դիմումում՝ ուղղված Արմավիրի ՏՀՏ-ին, ոչ մի անդրադրձ չկա թիվ 1023772 ակտի իրավաչափության վերաբերյալ: Դիմումով արձանագրված է հետևյալը.

- թիվ 1023772 ստուգման ակտով բացահայտվել է որ 06.10.2006թ.-ի առուծախի պայմանագրով վաճառված գույքի շուկայական արժեքը կազմում է ոչ թե 2318.700 դրամ, այլ 33.870.000 դրամ: Նշվածի արդյունքում «Բետարտշին» ՍՊԸ-ի մոտ առաջացել են շահութահարկի մասով 3.617.800 դրամ պարտավորություն, իսկ ԱԱՀ-ի մասով՝ 7.827.600 դրամի:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով, ոչ թե անվավեր է ճանաչվել թիվ 1023772 ստուգման ակտը, այլ «Բետարտշին» ՍՊԸ-ի և «Դավ-Դաֆ շին» ՍՊԸ-ի միջև 06.10.2006թ.-ին կնքված գործարքը, իսկ գործարքն անվավեր ճանաչելու դեպքում

համաձայն գործող օրենքի ԱԱՀ-ի և շահութահարկի մասով առաջացած պարտավորությունները ենթական են վերահաշվարկման, քանի որ ընկերությունը չի կարող պարտավորություններ ունենալ մի գույքի վաճառքի համար, որը փաստորեն դատարանի օրինական ուժ ստացած վճռով վերադարձվել է «Բետարտշին» ՍՊԸ-ին:

Ելնելով վերը նշվածից՝ «Բետարտշին» ՍՊԸ-ն խնդրում է վերանայել Արմավիրի ՏՏՏ-ի 21.07.2014թ.-ի թիվ 21/Դ որոշումը և համաձայնել կատարելու վերահաշվարկ:

«Հ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«Հ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 20.02.2007թ-ի թիվ 1023772 հանձնարարագրի համաձայն «Բետարտշին» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում, 23.05.2007թ-ին կազմվել է թիվ 1023772 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել ընդամենը 18.729.900 դրամի:

Ստուգման ակտով շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ պարտավորություններ առաջադրելու համար մասնավորապես հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ «Բետարտշին» ՍՊԸ կողմից 2006 թ-ի 4-րդ եռամսյակում իրացված հիմնական միջոցների գները չեն համապատասխանել (էականորեն ցածր են եղել) ՀՀ տարածքում գործող շուկայական գներին: Մասնավորապես, ըստ «Բետարտշին» ՍՊԸ-ի ներկայացված տվյալների 2006 թ-ի 4-րդ եռամսյակում իրացված հիմնական միջոցների իրացումից հասույթը կազմել է 2.318.7 հազ. դրամ, այն դեպքում, երբ ՀՀ ԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»-ի 10.05.2007 թ-ի թիվ 07-0336 եզրակացության համաձայն վերոգրյալ հիմնական միջոցների իրացումից հասույթը կազմել է 33.872.0 հազ. դրամ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով Հանքարտադրողների ոլորտային ՀՏ պետի 04.05.2007 թ-ի որոշումը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ստուգման ակտով հաշվարկվել են վերոգրյալ գործարքից բխող «Բետարտշին» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունները:

Այնուհետև «Բետարտշին» ՍՊԸ-ի 05.06.2007թ-ի դրությամբ առկա 22.224.700 դրամ պարտավորությունը (որի մեջ ներառված է նաև ստուգման ակտով առաջադրված 18.729.900 դրամ պարտավորությունը) բռնագանձելու պահանջով ՀՀ ԿԱ ՀՊԾ Հանքարտադրողների ոլորտային ՀՏ-ի կողմից 23.06.2007թ-ին հայցադիմում է ներկայացվել ՀՀ տնտեսական դատարան: ՀՀ տնտեսական դատարանի 19.12.2007թ-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2008թ-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 01.02.2008թ-ի վճռի դեմ փոխանցվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, որի 30.04.2008թ-ի որոշմամբ բեկանվել է ՀՀ տնտեսական դատարանի 19.12.2007թ-ի վճիռը՝ հայցը մերժելու մասով և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության: ՀՀ վարչական դատարանի 25.02.2009թ-ի որոշմամբ ՀՀ կառավարության առընթեր հարկային պետական ծառայության Հանքարտադրողների ոլորտային հարկային տեսչությունը փոխարինվել է իրավահաջորդ Կոմիտեով: Գործի քննության ընթացքում Կոմիտեն, նկատի ունենալով, որ վճարումների արդյունքում պահանջվող գումարի չափը նվազել է, պահանջել է բռնագանձել 8.395.500 ՀՀ դրամ: ՀՀ վարչական դատարանի 12.03.2009թ-ի վճռով հայցը բավարարվել է 8.395.500 դրամի չափով: «Բետարտշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 03.06.2009թ-ի որոշմամբ վերադարձվել է: Արդյունքում, ՀՀ վարչական

դատարանի 12.03.2009թ-ի վճիռը՝ «Բետարտշին» ՍՊԸ-ից հոգուտ պետական բյուջեի 8.385.500 դրամ բռնագանձելու մասին, ստացել է օրինական ուժ:

Վերոգրյալ փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ ստուգման ակտի իրավաչափությունը հաստատվել է ՀՀ վարչական դատարանի օրինական ուժ ստացած 12.03.2009թ-ի թիվ ՎԴ/3741/05/08 վճռով: Հետևապես հաստատված է համարվում նաև ստուգման ակտում նկարագրված գործարքի գծով լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների իրավաչափությունը:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի պահանջին՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 21.05.2014 թ-ի թիվ ԱՐԴ1/0296/02/09 վճռի հիմքով ստուգման ակտում նշված գործարքի գծով առաջադրված պարտավորությունները վերահաշվարկելու վերաբերյալ, ապա այն հիմնավոր չէ, քանի որ առկա է ՀՀ վարչական դատարանի օրինական ուժ ստացած 12.03.2009թ-ի թիվ ՎԴ/3741/05/08 վճիռը, որով հաստատվել է ստուգման ակտում նկարագրված գործարքի գծով լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների իրավաչափությունը: Բացի այդ, ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 21.05.2014 թ-ի թիվ ԱՐԴ1/0296/02/09 վճռի դեմ ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ կողմից բերվել է վերաքննիչ բողոք: Նման պայմաններում, ըստ էության, ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 21.05.2014 թ-ի թիվ ԱՐԴ1/0296/02/09 վճիռը չի կարող հիմք հանդիսանալ ստուգման ակտում նշված գործարքի գծով հաշվարկված պարտավորությունները վերանայելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Բետարտշին» ՍՊԸ բողոքը՝ ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետի 21.07.2014 թ-ի թիվ 2/Դ որոշման վերաբերյալ, մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

